

## Երաժիշտներ

Ահա մենք խումբ մը ճարտար երաժիշտ,

Կը սիրենք երգել ու նուագել միշտ,

Ունինք առանձին նուագարաններ

Եւ շատ ալ վարպետ ղեկավարներ:

Մեր նուագները եռանկիւններ են,

Պիտի նուագենք եթէ մեզ ներեն,

Շատ անուշ հնչեն ձայնը ականջին,

Չին չին չին չին չին չին ձայնը ականջին:

Ահա մենք խումբ մը.....

Մեզ ալ լսեցէք նուագենք ծնծղայ,

Չայն շատ կը սիրէ քիչ մ'ամեն տղայ,

Պետք է հետեւիլ չափով հարուածին,

Ծին ծին ծին ծին չափով հարուածին:

Ահա մենք խումբ մը.....

Մեր թմբուկներով կեանք կուտանք խումբին,

Խափանենք ձայնը ծնծղային, դափին

Եւ ուժգին հարուած տանք ամեն անգամ

Պամ-պում պամ-պում պիմ պամ պում տանք ամեն անգամ

Լա լալա լալա լա լալա լալա լալա:

